

ԲԱՐՈՒՄ

ԿՐԵՏԷԻ ԽՆԴԻՐԸ

Յառաջագոյնի պատճառներով

Նոյն Յոյն Բեթէ հիւրին կառավարութեան կողմէ տէրութիւններու ծանուցարկն տրուած պատասխանին վրայ այսպէս կը խօսի. Յունաստանի պատասխանը զանազան դաշինքներու տուելու տարբեր ընդունելութիւններու տուելու մէջ խառնափոխական կը նկատուի բայց ոչ թէ կացութիւնը աւելի տագնապալից ներկայացող է, Լոնտոնի, Բարդիի և Հոմար մէջ նոր բանակցութիւններու կարելիութիւն կենդանութեամբ մինչդեռ Պերլինի մէջ կարծեցած թէ վիճարանելու պէտք չկայ այլ եւս. Արեւելահայոցի մէջ տրուած մեկնութիւնները դեռ յայտնի չեն:

Բնականաբար դաշինքները այս պատասխանէն վերջ, անմիջապէս բանակցութեան սկսած են. Մովսէսեաններու առաջարկութիւնները ընդունուած են շատ տէրութիւններու կողմէ. Բայց Անգլիա տակաւին կը վարանի, և Ֆրանսիա այս վերջինին կողմը կը հակուի Լոնտոնի և Բարդիի մէջ կը ջանան տակաւին համոզել հիւրին կառավարութիւնը որպէս զի այս պատասխանը իր վերջին բառը չնկատէ. Բայց հաւանական է որ եթէ այս վարքերը անպտուղ մնան, Ֆրանսիա և Անգլիա չլիտի հակառակին զայդողական միջոցներուն, ընդհանրապէս կը կարծուի թէ իրաւաստութիւն մը պիտի գոյանայ. Թոյն չունի այլ ևս իր սովորական յաւատարմութիւնը. Կը կարծէ թէ Յունաստանի ներկայացուցիչներուն յաւատարմութիւնը յայտարարութիւնները իրաւաստութեան խաբիսի մը պիտի ձեւանային:

Պետականները

Յունաստանի պատասխանէն վերջ Բրիտանական կառավարութիւնը կէս պաշտօնական կերպով հրատարակեց երկու ծանուցում. Ահա անոնց բնագիւղը. «Յունաստանի պատասխանը եւ իսկ Այս պատասխանը ոչ ոք չայցուցի է, ոչ աւտորութիւններուն Յունաստանի հետ ունեցած ձգտեալ յարաբերութիւնները բարոյեցու ընտելութիւն ունի. Սա իրողութիւնը թէ Յունաստան տարածաշրջանի իր նաւատորմը քաշել, կրնայ քիչ մը ամօքել զայդողական խիստ միջոցները, զոր տէրութիւնները որոշած են զորածնել. բայց իրաւունք չունին կարծելու թէ տէրութիւնները երկար ատեն պիտի ներեն յունական բանակին ներկայութիւնը կրեալէ մէջ. Ուրեմն տէրութիւնները յունական պատասխանին վրայ իրենց տեսութիւնները փոխանակելէ վերջ, հիւրին կառավարութեան պիտի ծանուցանեն այն միջոցները զոր որոշած են

զորածնել անմիջապէս. Բնա հաւանական չէ որ տէրութիւններու բանակցութիւնները երկար տևեն, վասն զի յայտնի է թէ Գերմանիա և Ռուսիա կը պնդեն անմիջական զործողութեան համար. 20 Պաշտօնական չըջանալիներուն կարծիքը այն է թէ Կրիտէի մահմադարներուն և քրիստոնեաներուն մէջ լինանալիս շարունակութիւնը տէրութիւններուն վրայ պարտք պիտի դնէ Յոյնները վաճառելու և զորքեր դուրս հանելու. Բարեկարգութիւնը հաստատուելու համար:

Մ. Գրեգորի պարզեց Անգլիոյ բրտնած գիրքը կրեւորական խնդրին մէջ. Անգլիա, ըստ, համարում է միւս ցամաքային տէրութիւններուն հետ. Յայտարարեց նաեւ թէ Թուրքիա օրինական ճամբէն մէջ է, իր ստացուածքը պաշտպանելու իրաւունք ունի, մինչդեռ Յունաստանը համարձակ է իրօք կը բռնաբարէ միջազգային իրաւունքը. Անգլիական մամուլը սկսած է աւելի խիստ ըլլալ Յունաստանի դէմ. Տեղէնէն անգամ կըսէ որ խաղաղիկ պաշարում մը պէտք պիտի ըլլայ ինքիքը պատուաբեր իրաւաստութեան մը ընդունելու համար. Թոյն կըսէ. Յունաստանի առաւելած խօսքը, թէ յոյն բանակ մը կարելու է Կրիտէի մէջ խաղաղութիւն հաստատելու համար, արժէք չունի, քանի որ ճշդիւ այդ բանակին է յոյն դրօշին ներկայութիւնն է որ կրեւորականներուն կիրքը արժարժած է:

Մ. Գրեգորի խորհրդարանին մէջ չուրեց ըսել թէ լորտ Մալգոյրի պիտի խոստանայ. ինչպէս ըրաւ Մ. Մէյին Ֆրանսոյի մէջ, ընդունել անգլիական խորհրդարանին հաւանութիւնը զայդողական միջոցներ ձեռք առնելէ առաջ. Յետոյ խորհրդարանին մէջ զանազան կուսակցութիւններու պետերը հարցումներ ըրին, մասնաւորապէս սա խնդրին համար թէ Յունաստանի դէմ կուսակցէ առաջ պէտք չէ խորհրդարանին կարծիքը առնել. Մ. Պաթլուր կը յուսայ թէ բռնութիւնը զործածելու պէտք չպիտի ըլլայ թիւրքերու:

Թոյն խորհրդարանի պայքարին վերայ իր կրած ապաւորութիւնը կը բողբանդակէ այսպէս. Մ. Պաթլուրի քաջ և կորովի գիրքը իր պատասխաններուն մէջ պէտք է ցրուէ այն պատրանքները զոր Յոյնները ունին Անգլիոյ գիտաւորութեան վրայ:

Հոռոմէն կիմացնէ թէ նախարարական ժողովը որոշեց որ խաբիս մասնակցի Յունաստանի դէմ զայդողական զործողութեան մը, երբ տէրութիւնները միաձայնութեամբ որոշեն զայ. Արա զընթաց նուախումը պատրաստ է Արեւելը երթալու:

Խորհրդակցէն կիմացնէ թէ Ալբուրի կառավարութիւնը հրաման տրուաւ այդ քաղաքին մէջ եղող 87 լուսաւորները կրկնորդ պուստատակին, պա-

տելադական վիճակին մէջ գտնուիլ անյապաղ կրեւոր երթալու համար:

Գերմանիոյ կէս պաշտօնական մամուլը կըսէ թէ «Երեք կայսրերուն» համաձայնութիւնը այս ժամանակի տմենէն ուրախաւոր երեւոյթն է:

Ռուսական լիբրլերը կը պատրաստեն Յոյն կառավարութեան պատասխանը, որ բնա չլիտի խաբիսէ Ռուս պաշտօնական չըջանալիներուն հաստատ համարումը, և կրեւոր թէ մեծ տէրութիւններու ձեռքով գծուած սկզբունքը միակ միջոցն է քաղաքական վտանգաւոր խառնակութիւններու առջին տունը համար:

Կոնգրէսը Գրեգորի քաղաքական ազդու միջոցներով պիտի պաշարուի ոչ միայն Պերլէնը, այլ նաեւ Կրեւոր կըզդին. Աւստրիա-Հունգարիա, Գերմանիա և Ռուսիա արդէն իրենց հաւանութիւնները տունէն են:

Սօֆիայէն կիմացնէ թէ Ֆրանսական և Ռուս օրաթերներուն յայտարարութիւնները, որոնցով վտանգութիւն կը յայտնեն Պուրկար կառավարութեան իրաւունքները քաղաքականութեան վրայ. Ընտիր ապաւորութիւն մը առաջ բերած են իշխանապետութեան մէջ, մասնաւոր որ այդ յայտարարութիւնները համաձայն են նախարարապետ Մ. Սթոյլոֆի տեսութիւններուն:

Գ Ե Ր Մ Ա Ն Ի Ա

Կայսրը յուրիս ամուսն Սթոյլոֆ պիտի երթայ Օսկար Թադաւորին դահալարութեան քանդակագործ տաւրիքներին առթիւ:

ՄԻԱՑՆԱԼ-ՆԱՀԱՆԳՆԵՐ

Անկո - Ուերկիկան իրաւարարութեան դաշնագիրը դարձեալ սկսուքնուիլ Երեւոյտի յանձնաժողովին առջին. Թոյն կըսէ թէ յանձնաժողովը պարձեալ միեւնոյն տրամադրութիւններն ունի, և մեծ դիմադրութեան պիտի երթարկուի այն հակառակ ինչ ինչ բարեփոխումներուն:

Մ. Մարքիլի կրկնուողականութեան վրայ խոսակցեցաւ Ուրլուք Ժեւակուտականին հետ որ Եւրոպայէն նոր դարձաւ:

Նե - Երեք թերթերը զրոյց մը կը յիշեն, որուն համաձայն նախորդ նախագահ Մ. Գրիվլէնտ և իր կինը մտք ունին իրարմէ բաժնուելու. Տարիէ մը ի վեր արդէն ամուսինները բոլորովին զատ յարկերու մէջ կը բնակէին, վասնզի Տիկին Գրիվլէնտ կըսէր թէ իր ամուսնու զինքը զանազանութեան և տախտակամանին վրայ քաշուած է. Ասոր համար է որ անցեալ տարի Տիկին Գրիվլէնտ միշտ մերժեց պաշտօնական ընդունելութիւններու ներկայ գտնուիլ:

ԵՆՈՒԱԳԻՐ

ԲԱՐԻՉ, 12 Մարտ. — Արտաքին գործերու նախարար Մ. Հանթոն ապահովեց Մերկույորթի երկու խորհրդարանները պիտի գիտնան ի մօտ զոչիճին արտաքին քաղաքականութիւնը. Կառավարութիւնը յարատեւութեամբ պիտի շարունակէ իր հաստատուն գործը պահպանելու համար եւրոպական խաղաղութիւնը մեծ տերութիւններու ներգաղանկութեամբ, եւրպիտ սե է մէկ կէտին վրայ իրարանցումի մը առջին տունը նպատակաւ:

ՀԱՌՈՒ, 12 Մարտ. — Լեոն Ժ. Զըրարական մը զրկեց խաղաղի կաթոլիկ եպիսկոպոսներուն, հրաւիրելու համար զիրենք որ արգիլեն հաւատացեալներուն մասնակցիլ ընտրական պայքարներուն:

ՎԵՆԵՏԻԱ, 12 Մարտ. — Առողջաբանական միջազգային համաժողովը իր աշխատութիւնները զարդեցուց. Նախագահը, աշխարհային նիստին մէջ, փախուժ արտասանեց և շնորհակալ եղաւ օտար պատուիրակներուն որ պատասխանեցին բոլոր կառավարութիւններուն ուղղուած հրաւերին. Աշխարհայիններուն հաշուեցոյցը տեսարկով մը պիտի հրատարակուի ի մօտոյ:

ԲԱՐԻՉ, 12 Մարտ. — Վիեննայի և Ս. Բէրլինի քաղաքական շրջանակներուն մէջ կը հաստատուի թէ ռուսական և աւստրո - հունգարական կառավարութիւնները որոշած են իրենց անդունելի մերժիլ Յունաստանի պահանջումները:

ՄԱՏՐԻՏ, 12 Մարտ. — Ֆէսէն (Մարտ) կը հեռագրուի թէ ամբողջութեամբ մէջ աշխարհը 180 դործաւորներ թաղուեցան վառօղի պայթումի մը առաջ եկած աւերակներուն տակ:

ՎԻԵՆՆԱ, 12 Մարտ. — Մ. Իրէն, Կ. Պոլսը Աւստրիական հրապարտող Շրոտայի հրապարտող կըսէ Մ. Հիւքէի տեղ, որ նոյն պաշտօնով Կ. Պոլս կոչուած է:

ԲԵՇՐԱ, 12 Մարտ. — Խորհրդարանին մէջ նախարարապետ Պ. Պանֆի յայտարարեց թէ մեծ տէրութիւնները հաստատապէս և լրջօրէն որոշած են պահպանել Թուրքիոյ ամբողջութիւնը և Պաշտօնեան հոգին ներկայ վիճակը. Այս հաստատակարար ամենէն ապահով երաշխաւորութիւնն է բարեկարգութեան և խաղաղութեան պահպանման համար. Պաշտօն Պանֆի աւելցուց թէ ինք չլիտի բան մը Պաշտօնեան տէրութիւններու միութեան վրայ. Մեծ տէրութիւնները բացարձակ գիտաւորութիւն ունին անկարելի դարձնելու պատերազմի մը պատահականութիւնը:

ԲԱՐԻՉ, 12 Մարտ. — Խորհրդարանին մէջ Մ. Հանթոն յայտարարեց թէ կառավարութեան քաղաքականութիւնը կը բողբանդակուի սա՛ բաւերուն մէջ. Խորհրդարանը պահպանութիւն եւրոպական ներդաշնակութեամբ (Մաքաւարութիւններ):

ՆԻՍ, 12 Մարտ. — Անգլիոյ թաղական հաս կըսէ:

ԱՅԳԱՅԻՆ

ԼՈՒՐԵՐ

Յառաջիկայ Զատիկական տօնին առթիւ Ս. Պատրիարք Հայրը շրջաբերական մը պիտի զրկէ մայրաքաղաքի թաղերու Գործիչներուն և Թաղ. Խորհուրդներուն, որպէս զի նախորդին նման այս տարի ևս հանգանակութիւններ կատարելով օգնեն կարօտեալ ընտանիքներուն:

Գաւառային և տեղական գործերու մասնաժողովները այս շաբաթ պիտի գումարաւն Ամեն. Ս. Պատրիարք Հոր նախագահութեան տակ:

Նոյնպէս կ'ընտանցոյցի յանձնաժողովը իր քննութիւնները պիտի շարունակէ Պատրիարքարանի մէջ:

Ուսումն. Խորհուրդն ուրբաթ օրը շաբաթական նիստը ընելով Ղալաթիոյ Խորհրդարանին մէջ, զարդեցաւ օրակարգին վրայ գտնուած երեսունի չափ զանազան խնդիրներով. Նիստին յետոյ Խորհրդը գումար, կրթական ինչ ինչ խնդրոց մասին, խորհրդակցեցաւ Ս. Պատրիարք Հոր հետ:

— Յակոբ Էֆ. Գուրգէն Խորհրդին ներկայացուց Տիկին Զապէլ Տանէրեանի երկարած «Քերականութիւն Արդի Աշխարհաբար Լեզուի» անուն գործին վրայ պատրաստած իր մէկ տեղեկագիրն, զոր Խորհուրդը կարգադէ յետոյ վաւերացուց և արտօնեց զայն գործածելու Ազգային վարժարանաց մէջ:

ՕՏԵՈՆԻ ԹԱՍՐՈՆԸ

ՏԻ ԿԼԱՍԻԻ ԽՈՒՄԲԸ

Այս օրերը, 31 15 Մարտ. ժամը 9 (ը. ե.)

A M A N T S — ՍԻՐԱՀԱՐԱՆԵՐ

Կատակերգութիւն զինք արարուածով

Առաջին ներկայացում Օր. ՄԱՐՍԷԼ ԺՈՒԷԼ Կորմէ, ընկերակցութեամբ Պ. Գ. ԱՆԹՈՒԱՆ ԳՈՐԶԷԼԷՆ, և ԳԱՄԵԼ ՏԻՄԷԼԷ:

ՏԵՂԵՐՈՒ ԴԻՆԸ

Բ. Կարգի օրեակ	60	դրոշ
Թիկնաթոս	54	»
Պարզ նստաբան	15	»
Կարգի	7 1/2	»

Վաղը Բ. Ներկայացում Օր. ՄԱՐՍԷԼ և իր ընկերներուն:

LA PARISIENNE-L'ÉTÉ DU St. MARTIN

ԲԱՐԻՉ ԶՈՒՆ

ՍԷՆ ՄԱՐԹԵՆԻ ԱՄԱՌԸ

ԹԵՐԹՈՆ ՄԱՍԻՍԻ (74)

ՍԱՌՈՅՑԻ ԱՆԱՊԱՏԸ

ԺԻՒԼ ՎԵՐՆ

— Պիտի երթամ:

— Բերանաբաց, բոցատոշոր հրաբերան մ'է այն:

— Պիտի երթամ:

Կորովի համարումը՝ օրով Հաթրաս արտասանեց այս վերջին խօսքերը. կարելի չէր նկարագրել. Իր օրերկամները ապշած էին, սարսափահար կը դիտէին լիւր, որ օրին մէջ կը տատանէր իր բոցեղէն զարդ մանկուր:

Այն տան Տոթթորը խօսք առաւ. պընդեց, ստիպեց Հաթրասը որ հրաժարի իր ծրարքին. Բնա ինչ որ իր սիրտը կըսէ երեւակայել, խոսքի աղաղակէն սկսեալ մինչեւ բարեկամական սպանալիքներ, բայց բնա բան մը չհասկցաւ նաւայիտին ջրուտ հոգիին վրայ, որ բռնուած էր տեսակ մը ինքնաթիւնամբ, զոր կարելի էր կոչել քրեւեակային ինքնաթիւն:

Բնա միջոցներ միայն կային այլ եւս՝ կանցնելու համար այս տխուր, որ գահակէտ կերթար զէպ իր կորուստը. Բայց

նախատեսելով որ ծանր անկարգութիւններ առաջ պիտի բերէին, Տոթթորը վերջին պարագային միայն ուղից գործածել զանոնք:

Միւս կողմէն կը յուսար թէ ֆիզիքական անհարմարութիւններ, անանցանելի խոչընդոտներ Հաթրասը պիտի կանցնէին իր ծրարքին գործադրութեան մէջ:

«Բանի որ այդպէս է, ըստ, քու հոռեւէդ կուգանք»:

— Այո, պատասխանեց նաւապետը, մինչեւ լուսն կէս մէջը. Այ աւելի հեռուն. Զի վայրը որ Անգլիոյ տանք ձեր հետ կրկին օրինակը այն արձանագրին՝ որ մեր գիւտը կը վկայէ, եթէ... — Սակայն...

— Որոշուած է, պատասխանեց Հաթրաս անասանի չեղումը մը, և բանի որ բարեկամի աղաղակները չեն բաւեր, նաւապետը կը հրամայէ:

Տոթթորը չուրեց աւելի երկար ատեն պնդել, և բանի մը վարկեան վերջը վարքի ջնկատը՝ զժողովուրդը վերելք մը համար արքայութեան և Տոթթորի առջին, սկսաւ ճամբու երկել:

Երկինքը կը շողար. Զերմաշափ յիսուն երկու աստիճան կը ցուցնէր (աւելի 110 հարիւր). Միջնորդը լայնաբար կը տոգորուէր լայնութեան այս բարձր աստիճանին յատուկ պայծառութիւնէն. Առտուան ժամը ութն էր:

Հաթրաս առաջիկ իր պտտական շան հետ, Պէլ և Ալիսան, Տոթթորն ու ձոններն անոր բովէն կերթային:

Սիր վախում, բնա ձոններն:

— Ոչ, ոչ, վախումը բան չկայ, պատասխանեց Տոթթորը, հաս ենք մենք:

Ինչ տարբերակ կ'զգեայ, և ինչպէս նկարագրել անոր մասնաւոր դիմադրութիւնը, որ անկերկար էր, և նորութիւն և մաղաւտութիւն. Այդ հրաւիրը հին չէր երեւեր, և երկարատեւ կրնային դիմադրու Ռուսական մը տալ անոր կազմութեան:

Ապառաժները՝ իրարու կպած, հաւասարակութեան հրաշքով մը միայն դիւար ընած էին:

Լիւր, եթէ կրնանք այսպէս ըսել, վերին ինկած քարերու կուտակում մ'էր միայն. Բնա հոգ չկար, ոչ իսկ ամենապային մամուս, ամենաքիտ քարաքոյ, վերջապէս ոչ մի հետք բուսականութեան. Հրաբերանին վտանգ ամբողջութեամբ դեռ ժամանակ ունեցած չէր միայնաւ ոչ ջրին ջրածնին, ոչ ամպերուն անուշադրին, գործարանաւոր ինքիքը ձեւանելու համար լայնի աղղեցութեան տակ:

Զօրուն մէջ կորուած այս կողմին անշուշտ ձեւացած էր հրաղիւային կղզիներ. Երկարատեւ շատ լիւրերը այսպէս կ'աղմուած են, ինչ որ իրենց ձոցէն ժայթքե-

սին, բնական եղաւ զիրենք պահելու. Զորքերեկ նստա՝ որ արդէն փոխած է իր զանգուածէն աւելի տուտար լուսավի ծաւալ մը. Գործարար Նարոյի մօտ Մոնթէ-Նովո, լայնի աղղեցութիւններէն ծնած քառասունըւթ ժամուան կարճ միջոցին մէջ, Արափաներու կոյտը՝ օրոնցով կը ձեւանար Թագուհիին կողմին, ծնուաւ երկրի աղբիւրներէն զուր եկած էր. ամենաբարձր աստիճանով պղտտական նկարագիրը ունէր. Առնեց իր տեղը կը տարածուէր անծայրածիր ծովը, որ ընտելեան առաջին օրերու կազմուած էր ջրի չօղիներու խառնուածով պարած երկարատեւ վրայ. Բայց որչափ որ հին և նոր աշխարհի հրաբուխները մարեցան, կամ աւելի ճիշդ ըսելով, գոցուեցան, անպատճառ իրենց տեղը պիտի անցնէին նոր հրացոյտ հրաբերաններ:

Արդարեւ կրնանք երկիրը նմանցնել զնոսաձեւ ընդարձակատար կաթայի մը. Հին, կղզրանկան կաթայի աղղեցութեան տակ կը ծնին բերապատիկ անհունութեան չօղիներ, շտեմարանուած հաղաբուտը միջնորդներու ձգտումով մը, և որ կրնան երկարատեւ վեր ցատկեցնել, եթէ կաթային գործի կողմը չիւնուած կաթարիւններ չըլլան:

Այս կաթարիւնները հրաբուխներն են. Երբ մէջը գոցուի, միւսը կը բացուի, և բնականաբար գտնուած տեղը, ուր ան-

շուշտ տափակութեան պատճառաւ երկրին կիզուր նուազ հաստ է, զարմանալի չէ որ հրաբուխ մը յանկարծուտ ձեւանայ ձուլածոյ գանգուածի մը ալիքներուն վերեւ բարձրացումով:

Տոթթորը՝ Հաթրասին ետեւէն երթալով հանդերձ՝ կը դիտէր այս տարօրինակ մասնաւորութիւններ. իր ոտքը կը կոխէր հրաբուխին թոփաքարեր (tuil) և ծակուկէն սպիտակման մուրներ, շիւտած հրաբուխային աղղեցութիւններ, ածխաներէ և ժայռերէ, իրաւաւայի սիւնիկներուն և կրանիտներուն նման:

Բայց եթէ կողմին կը վերագրէր գրեթէ արդի

առաջին համարում է, մասնավորապես այդ խնդրոյ պատ-
աստուծեան մէջ: ՏՐ. Ս. Ս. ՄԱՎՐՈՅԵՆԻ ՓԱ
ԲՃԻՆԷՆ ԿԵՆ. ՍՈՒՅԹԻ

